ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-8-Ն-3
2025թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26-Ի ԹԻՎ ԲԴԽ-81-Ն-32 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի 2024 թվականի օգոստոսի 26-ի «Դատավորի գործունեության գնահատման կարգը և ժամկետները, գնահատման համար անհրաժեշտ տվյալների հավաքման կարգը, մեթոդաբանությունը, սանդղակները և գնահատման թերթի ձևը սահմանելու և Բարձրագույն դատական խորհրդի 2020 թվականի օգոստոսի 10-ի թիվ ԲԴԽ-53-Ն-9 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ ԲԴԽ-81-Ն-32 որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Որոշման 3-րդ հավելվածի «Մեթոդաբանություն դատավորի գործունեության գնահատման» վերտառությամբ աղյուսակի «1. Դատավորի աշխատանքի որակ և արհեստավարժություն» գլխի «1.1 Դատական ակտը հիմնավորելու կարողությունը» բաժինը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ

2025թ. հունվարի 23
ք. Երևան

Հավելված
Բարձրագույն դատական խորհրդի
2025 թվականի հունվարի 23-ի
թիվ ԲԴԽ-8-Ն-3 որոշման

«ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱՎՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. ԴԱՏԱՎՈՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐԱԿ ԵՎ ԱՐՀԵՍՏԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ (առավելագույն միավորը՝ 50)				
1.1. Դատական ակտը հիմնավորելու կարողությունը (առավելագույն միավորը՝ 20)				
	Ցուցիչ	**Մեթոդ**	**Միավոր**	**Փաստաթղթավորված տվյալների շրջանակ**
1.	**Գործում առկա ապացույցների հիման վրա փաստերը հաստատելու կարողություն *(առավելագույն միավորը՝ 10)***	Գնահատման ենթարկվող 10 ակտերից 9-ը թիվ 1 ցուցիչով սահմանված պահանջները բավարարելու դեպքում գնահատվում է.	10	Միջանկյալ և եզրափակիչ դատական ակտեր
		Գնահատման ենթարկվող 10 ակտերից 2-ը թիվ 1 ցուցիչով սահմանված պահանջները չբավարարելու դեպքում առավելագույն 10 միավորից հանվում է 4 միավոր, ընդհանուրը գնահատվում է.	6	
		3-5-ի դեպքում հանվում է 7 միավոր, ընդհանուրը գնահատվում է.	3	
		6-ը և ավելիի դեպքում հանվում է 10 միավոր, ընդհանուրը գնահատվում է.	0	
2.	**Փաստերի և իրավունքի, դրանց համադրման վերաբերյալ ինքնուրույն վերլուծության կարողություն *(առավելագույն միավորը՝ 10)***	Գնահատման ենթարկվող 10 ակտերից 9-ը թիվ 2 ցուցիչով սահմանված պահանջները բավարարելու դեպքում գնահատվում է.	10	Միջանկյալ և եզրափակիչ դատական ակտեր
		Գնահատման ենթարկվող 10 ակտերից 2-ը թիվ 2 ցուցիչով սահմանված պահանջները չբավարարելու դեպքում առավելագույն 10 միավորից հանվում է 4 միավոր, ընդհանուրը գնահատվում է.	6	
		3-5-ի դեպքում հանվում է 7 միավոր, ընդհանուրը գնահատվում է.	3	

		6-ը և ավելիի դեպքում հանվում է 10 միավոր, ընդհանուրը գնահատվում է.	0	
3.	**Դատական ակտի ծանրաբեռնումը ակնհայտ ոչ վերաբերելի հղումներով**	Յուրաքանչյուր գնահատման ենթարկվող ակտի համար հանվում է առավելագույն 20 միավորից	0,1	Միջանկյալ և եզրափակիչ դատական ակտեր
4.	**Մեղադրանքի սահմաններից, հայցի առարկայի շրջանակից, վերաքննիչ բողոքի հիմքերից առերևույթ դուրս գալը**	Գնահատման ենթարկվող ակտից ցուցիչ 4-ի պահանջներին բավարարելու դեպքում առավելագույն 20 միավորից հանվում է՝ 1-3-ի դեպքում՝ 4-5-ի դեպքում՝ 6 և ավելիի դեպքում՝	3 5 10	Եզրափակիչ դատական ակտ, Մեղադրական եզրակացություն, հայցադիմում, վերաքննիչ բողոք
5.	**Դատական ակտի պատճառաբանական մասի և եզրափակիչ մասի միջև պատճառահետևանքային կապի բացակայությունը**	Գնահատման ենթարկվող ակտից ցուցիչ 5-ի պահանջներին բավարարելու դեպքում առավելագույն 20 միավորից հանվում է՝ 1-3-ի դեպքում՝ 4-5-ի դեպքում՝ 6 և ավելիի դեպքում՝	3 5 10	Միջանկյալ և եզրափակիչ դատական ակտեր

»: